ÉVALUATION DIAGNOSTIQUE
DES ÉLÈVES ALLOPHONES

Compréhension de l'écrit

CYCLE 3

Langue d'origine : arménien

CANOPÉ

ԱԶԳԱՆՈՒՆ:

ԱՆՈՒՆ:

NIVEAU : FIN DE CM1

1

Կարդա հետևյալ տեքստը:

Սամին, մի պատանյակ, առաջին անգամ գնում է իր նոր դպրոցը:

Ճանապարհին, Սամին դանդաղ դուրս է գալիս իր քնկոտությունից: Իրականում, նա լավ չէր քնել: Նա սարսափ երազ էր տեսել: Երազում նա տեսնում էր, որ աշակերտներն ունեին երեխայի մարմիններ և թռչունների գլուխներ: Ուսուցչի դեպքում հակառակ պատկեր էր, նա ուներ մարդու դեմք՝ չար տեսքով և հսկայական արծվի մարմին:

Նա կրկին մտածում է իր գյուղի մասին՝ Լաբասիում: Իր ընկերներն անշուշտ գնում են այնտեղ իրենց փոքրիկ դպրոցը: Նա հիշում է աղյուսից պատերը, հողե գետինը և բակի մեջտեղում գտնվող ջրհորը: Դասամիջոցների ժամանակ, նրանք սիրում էին նստել մեծ ծառի շվաքի տակ, որը տեսնում էին ջրհորի ձախ կողմում՝ բակ մտնելիս:

Նոր դպրոց գնալու համար, Սամին, դուրս գալով տանից նախ գնում է աջով, հետո անցնում ծառերի կողքով և այնուհետ՝ առաջին փողոցը ձախով: Վերջում նա շարունակում է ուղիղ գնալ: Դպրոցը գտնվում է անմիջապես այգու դիմաց՝ նույն փողոցում:

MI MF MS TBM

ՊԱՏԱՍԽԱՆԻՐ ՀԱՐՑԵՐԻՆ

2

Շրջանակի մեռ աջ ճիշտ պատասխանը: Այս տեքստը:

- պատմություն է
- բաղադրատոմս է
- կիրառման ձև է
- բանաստեղծություն է

MI MF MS TBM

3

Շրջանակի մեջ առ ճիշտ պատասխանը: Քո կարծիքով Սամիի մղձավանջը

- անհանգստացնող է
- վստահություն ներշնչող է
- ֆիզկուլտուրային է առնչվում
- ուրախ բնութի է

MI MF MS TBM

4

Շրջանակի մեջ առ Լաբասիում Սամիի դպրոցի նկարը եւ գիծ քաշիր մյուսների վրա:

MI MF MS TBM

5

Քարտեզի վրա գծիր այն երթուղին, որով պետք է ընթանա Սամին դպրոց գնալու համար:
Մեկնակետը Սամիի տունն է, որի վրա խաչ է արված:



MI MF MS TBM

Կարդա հետևյալ տեքստը:

Այս առավոտ սակայն նա չի ճանաչում ճանապարհը: Այս ծառը երեկ այստե՞ղ էր:

Սամին ինքն իրեն ասում է, թե հիշողությունն իրեն դավաճանում է: Տարօրինակ մի զգացում հետապնդում է նրան, և նա վերհիշում է իր մղձավանջի պատկերները:

Հանկարծ թեթև քամի է սկսում փչել, եւ Սամին գլխին է քաշում հոր նվիրած հովարով գլխարկը: Դա անմիջապես նրան վստահություն է ներշնչում:

Դպրոցի մոտ հասնելով՝ Սամին միանգամից կանգ է առնում: Երկինքը ծածկվել է ամպերով, եւ անձրևի մի քանի փոքրիկ կաթիլ սկսում է թափվել: Առանց այլևս սպասելու, նա մտնում է դպրոց:

Նա տեսնում է խաղաբակը, որը շատ տարբեր է Լաբասիի դպրոցի բակից: Նա չգիտե՝ ուր գնալ: Այդ ժամանակ նա հանում է դասացուցակը, որը տվել էին իրեն, երբ նա եկել էր դպրոց ընդունվելու, բայց դա նրան շատ չի օգնում: Նա ոչինչ չի հասկանում դրանից:

Դասացուցակ. Ա դասարան

	Երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ
Ժ8	ընթերցանություն				ընթերցանություն
Ժ9	պատմություն	մաթեմատիկա	մաթեմատիկա	ֆիզկուլտուրա	աշխարհագրություն
Ժ10	աշխարհագրություն	գիտություններ	կենդանի լեզու	ֆիզկուլտուրա	քերականություն
Ժ11	կենդանի լեզու	կենդանի լեզու		ֆիզկուլտուրա	պատմություն
Ժ13	գիտություններ	քերականություն		ընթերցանություն	կենդանի լեզու
Ժ14	երաժշտություն	Արվեստներ		մաթեմատիկա	մաթեմատիկա
Ժ15				պատմություն	

NIVEAU : FIN DE CM2

ՇՐՋԱՆԱԿԻ ՄԵՋ ԱՌ ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ

6

Ո՞ր նախադասությունն է հարց:

- Ցուրտ քամի է փչում:
- Այս ծառը երեկ այստե՞ղ էր:
- Մի տարօրինակ զգացում հետապնդում է նրան:
- Նա ոչինչ չի հասկանում դրանից:

MI MF MS TBM

7

Այս տեքստում ի՞նչ եղանակ է: Ուշադրություն, դու պետք է շրջանակի մեջ առնես մեկից ավելի պատասխան:

- Ցուրտ քամի
- տաք քամի
- ամպեր
- թույլ անձրեւ
- պարզկա եղանակ
- հորդ անձրև
- արև

MI MF MS TBM

8

Ինչո՞ւ է Սամին հանում իր դասացուցակը:

- որովհետև նա մաթեմատիկա է սիրում:
- Որովհետև սկսում է անձրև գալ:
- որովհետև նա տեղեկություններ է փնտրում:
- որովհետև հինգշաբթի օրը նա ֆիզկուլտուրա ունի:

MI MF MS TBM

9

Սամին առավել հաճախ ժամը քանիսի՞ն է սկսում իր օրը:

- ժամը ութին
- ժամը իններին
- ժամը տասին

MI MF MS TBM

10

Սամին ո՞ր օրերին պատմության դաս չուն ի:

- երկուշաբթի և հինգշաբթի
- երեքշաբթի և չորեքշաբթի
- չորեքշաբթի և հինգշաբթի
- երկուշաբթի և ուրբաթ

MI MF MS TBM

Կարդա հետևյալ տեքստը.

Հանկարծ ամպրոպ է պայթում: Սամին հազիվ է խույս տալիս խոշոր կաթիլներից, որ այժմ թափվում են բակում: Ներքին բակում երեխաները նյարդայնացած են և իրար հրմշտում են անձրևից խուսափելու համար: Ասես հավանոց լինի, դա նրան հիշեցնում է նախօրեին իր տեսած մղձավանջի պատկերները:

Բոլորն ասես խուսափում են նրանից: Հանկարծ մի տղա է մոտենում: Նա Սամիին է դիմում և ինչ-որ բան է պահանջում՝ մատնացույց անելով հովհարով գլխարկը, բայց Սամին նրան չի հասկանում: Ինչպե՞ս պետք է հասկանար: Նա չգիտե տակոներեն՝ իր նոր երկրի պաշտոնական լեզուն: Տղան հրաժարվում է իր մտադրությունից և հեռանում ակնհայտորեն նյարդայնացած:

Փորձելով զսպել իր արցունքները՝ Սամին հանդիպում է մեկ ուրիշ տղայի հայացքին, որի հագին կապույտ սվիտեր է: Արագ հեռանալուց առաջ, վերջինս նրան մատնացույց է անում բակում մի ցուցանակ, որի վրա պատկերված է հովարով գլխարկ, որի վրա գիծ է քաշված: Սամին հասկանում է, որ այս դպրոցում հովարով գլխարկ կրելն արգելված է:

Վերջապես զանգը հնչում է, և ուսուցչուհին գալիս է իր աշակերտներին տանելու: Նրա հայացքը խիստ է, քիթը երկար է և կեռ: Նա կրում է մի մեծ թիկնոց, որը նման է հսկայական թևերի: Անհավատալի է. ասես Սամիի երազի արծիվը լինի:

Հենց մտնում են դասարան, ուսուցչուհին անմիջապես երեխաներին խնդրում է տետրին սոսնձել դասացուցակը: Սամին մյուս աշակերտներին նայելով հասկանում է, թե ինչ է պետք անել, բայց նրա համար ամեն ինչ խառն է:

Այդ պահին ուսուցչուհին նստում է նրա կողքին: Մի ձեռքը նրա ուսին դրած՝ ուսուցչուհին նրան ներկայացնում է դասարանին: Թեթևանալով՝ Սամին իրեն ավելի քիչ լարված է զգում: Նա չի հասկանում ուսուցչուհու բոլոր ասածները: Սակայն նա տրվում է ուսուցչուհու հնչերանգին և նրա երգեցիկ ձայնի ջերմությանը: Նրա նոր ընկերներն այժմ հետաքրքրությամբ են նայում նրան, այդ թվում նաև՝ կապույտ սվիտերով տղան, որը ժպտում է նրան: Արևի մի ճառագայթ շոյում է Սամիի այտը: Սա դպրոցում նրա առաջին օրն է, և ամեն ինչ լավ է լինելու:

NIVEAU : FIN DE 6E

ՊԱՏԱՍԽԱՆԻՐ ՀԱՐՑԵՐԻՆ

11

Շրջանակի մեջ առ ճիշտ պատասխանը: 2-րդ պարբերությունում մյուս երեխաները.

- հաճելի են
- տհաճ են
- հայտնի չէ, թե ինչպիսին են

MI MF MS TBM

12

Համարակալիր նախադասությունները ըստ պատմության ընթացքի՝ ամենահին իրադարձությունից մինչեւ ամենանորը:

..... • Մի տղա է մոտենում:

..... • Երեխաները հրմշտում են իրար:

..... • Սամին մղձավանջ է տեսել:

..... • Ամպրոպ է պայթում:

MI MF MS TBM

13

Արդյո՞ք ուսուցչուհին արծիվ է: Շրջանակի մեջ առ ճիշտ պատասխանը:

- այո
- ոչ
- հայտնի չէ

MI MF MS TBM

14

Սամիի զգացողությունները կապիր տեքստի տարրերի հետ:
Ուշադրություն, բոլոր նախադասությունները պետք է օգտագործվեն:

Երբ Սամին անհանգիստ է

Երբ Սամին իրեն ինքնավստահ է զգում

- Երեխաները հետաքրքրությամբ են նայում նրան
- Երեխաները խուսափում են նրանից
- Ամպրոպ է պայթում
- Նա լիցքաթափվում է:
- Նա զսպում է արցունքները
- Արեւ է բացվում:

MI MF MS TBM

15

Դիտարկիր վերջին պարբերության ցուցիչները: Քո կարծիքով ինչպե՞ս է ընթանալու պատմության շարունակությունը: Շրջանակի մեջ առ ճիշտ պատասխանը:

- Սամին լուրջ խնդիրներ է ունենալու:
- Ուսուցչուհին չի զբաղվի Սամիով:
- Սամին կհարմարվի և այնպես կանի, որ մյուսներն իրեն ընդունեն:
- Կապույտ սվիտերով տղան դառնալու է նրա թշնամին:

MI MF MS TBM

Rappel des codes de correction :
MI = maîtrise insuffisante MF = maîtrise fragile MS = maîtrise satisfaisante TBM = très bonne maîtrise
MI et MF : non acquis MS et TBM : on considère que c'est acquis